

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՈՐՃՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

«Մուրճ»-ի անցեալ 9-րդ Խ-ում, սեպտեմբերի 22-ին (նոր սովոր) կատարւած պատգամաւորական ընդհանուր ընտրութիւնների հետեւանքները հաղորդելիս, մենք խոստացանք ներկայ 10-րդ Խ-ում ներկայացնել մի հաշիւ, թէ ի՞նչ է արել ֆրանսիական երրորդ հանրապետութիւնը իւր ազգի համար՝ իւր 19 տարւայ գոյութեան ընթացքում։

Ներկայ տարւայ պատգամաւորական ընտրութիւնները ունեին բացառիկ նշանակութիւն, որովհետեւ 1877 թւականից դէսը՝ ֆրանսիական հանրապետութեան երբէք այնքան մեծ վտանգ չէր սպառնացել, որքան ներկայ թւականին։ 1877-ին, մարշալ Մակ-Մահօնի նախագահութեան ներքոյ և սորա խիկ օդնութիւնով, կազմեց մի մինիստրութիւն բաղկացած հանրապետութեան թշնամի մինիստրներից, հակառակ պատգամաւորների ժողովի հանրապետական մեծամասնութեանը։ Մոնարխիական մեծամասնութիւն տոեղջելու համար, Մակ-Մահօնը, համաձայնութեամբ այն ժամանակ մեծամասնար մոնարխիստաներից բաղկացած սենատի, արձակեց պատգամաւորների ժողովը և նոր ընտրութիւններ նշանակեց, յուսալրվ, որ կառավարութեան թելադրութեամբ ազգը կ'ընտրէ մօնարխիական պատգամաւորներ։

Փորձը չ'աջողւեց։ Թիերը այդ ժամանակներում մեռաւ և Գամբետուան յաղթութիւնը տարաւ, փրկելով ազգը մի նոր քաղաքական յեղաշրջումից և փրկելով հանրապետութիւնը իւր դէմ լարած որողապլթներից։

Հանրապետութեան այդ յաղթութիւնը հիացրեց բոլոր լուսաւոր աշխարհը: Եւ դա մի յաղթութիւն էր, որը ապահովեց հանրապետութեան կեանքը աւելի քան մի տասնեակ տարով: Այդ փառաւոր յաղթութեան ազգեցութեան ներքոյ ֆրանսիական սենատը շուտով դառնաւ հանրապետական: Վախճանած մնարխատ սենատօրների տեղը ընտրւեցին մեծ մասամբ հանրապետականներ: Փոխեց սահմանադրութեան յօդածը, որով սենատօրները ընտրւում էին ցամահ: անուհետեւ ամեն երեք տարին մի անգամ սենատի  $\frac{1}{3}$  մասը պէտք է փոխեր: Ազդպիսով սենատի հանրապետական դարձնելլ հեշտացաւ ազգի համար, և սենատը շուտով դառնաւ հանրապետական, որպէս էր և պատգամաւորների ժողովը:

Ազդպիսով քաղաքական երեք մարմիններից՝ նախագահ, սենատ և պատգամաւորների ժողովը, — երկու վերջինները, ազգի մեծամասնութեան կամքով, դառնաւ հանրապետական: և որովհետև նախագահ ընտրում է ոչ թէ ազգը ուղղակի, այլ պատգամաւորների ժողովը և սենատը միասին, ուստի 1879-ին հրաժարւած Մակ-Մահոնի տեղ նախագահ ընտրւեց հանրապետական նախագահ Գրեվի, որը վերընտրւեց 1885-ին: իսկ 1888-ին նորա տեղը ընտրւեց ներկայ նախագահ Կարնօն:

Մի տասնեակ տարի ֆրանսիական հանրապետութիւնը իւր կեանքը ապահովեց 1877 թւականին ստացած մղումով: Բայց այդ տասնեակ տարում շարժումը՝ այսպէս ասած՝ սառեց: 1885 թւականի ընտրութիւններով մնարխատաները աւելի զօրեղացան, նոյն պատգամաւորների թիւը աւելացաւ: Մանաւանդ ահա այդ դէպքից յետոյ, հանրապետութեան թշնամինները զլուխ բարձրացրին, յուսալով որ ահա 1889 թւականին, մնարխատական շարժումը աւելի ու աւելի կը ծաւալի և այդ հանրապետութեան թշնամինները աւելի էլ կը զօրեղանան: Եթէ այդ շարժումը առաջադիմէր, հանրապետութիւնը իրօք վասնդած կը լինէր:

Ահա այդ ժամանակն է, որ սկսեց կազմակերպւել մի նոր կուսակցութիւն՝ թշնամի այժմեան հանրապետութեան: Այդ կուսակցութեան յազանի զլուխն է Բուլանժէն:

Այս նոր թշնամին, որին նւիրած էր «Մուրանի Յուլի» մի յատուկ յօդած, առաջ եկաւ ոչ իր մնարխատ, այլ իր հանրապետութիւնը իրօք վասնդած կը լինէր:

սութիւնը աւելի ամրապնդող։ Նա իւր կուսակցութեան անունը դրեց «ազգային կուսակցութիւն», որի գլուխն էր ինքը Բուլանժէն, իսկ սիները՝ Ռօշըֆօր, Դիլլոն, Լագերը և ուրիշներ։ Բուլանժէն դառաւ վտանգաւոր այն օրից, երբ նա, սուն 1889 թ. յունարի (նոր ստիլով) 27-ին, ընտրեց պատգամաւոր Պարիզում, իւր անուան վերաց միացնելով Պարիզի ձախնասու բնակիչների թւի կէսից աւելին, այն է. մօտ 350.000 ձայն։ Այդ ձայների մէջ խառն էին հանրապետականներ, որոնք հաւատում էին Բուլանժէի ասողին աւելի, քան նորա հանրապետականութեան և յետոց ամեն կարգի մնարխիստներ՝ թէ թագաւորականներ, որոնց գլուխն է աքսորւած Պարիզի կոմոք, անուանական ժառանգը Ֆրանսիայի նախիին թագաւորական գահի և կայսերականներ, որոնց գլուխն է պրինց Ֆերոմը և տրաորդի պրինց Վիկտորը, անուանական ժառանգները նապօլէօնների։

Վտանգը սորանումն էր, որ, հանրապետականների մի թէկուղ փոքր մասը անցել էր Բուլանժէի կողմը և միևնուն ժամանակ նոյն իրը թէ հանրապետական Բուլանժէին միացած ոյժերով պաշտպանում էին ամեն կարգի մնարխիստներ։ Եւ որովհետեւ Բուլանժէի յաղթութեան առաջին հետեւանքը կարող էր լինել շփոթութիւնը, որից միայն մնարխիստները սպասում են ամեն մէկը իւր Մեսսիայի գալուսորը, ուստի բուլանժէական շարժումը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ քաղաքական շփոթութեան մի շարժում, որից ինչ բան դուրս գալը ոչ ոք չէր կարող գուշակել։

Վտանգը տեսնելով, տեսնելով նաև որ հազարաւոր հանրապետականներ կան, որոնք հետեւում են Բուլանժէին միմիայն սորա անպատիժ մնալու պատճառով, և հաւատարով նորա խոստումներին, նորա քաղաքական կոչման, — հանրապետութիւնը, իրան պաշտպանելու և քաղաքացիների մաքերը լուսաւորելու մտքով, գատ բացեց Բուլանժէի և ընկերութեան գէմ, մեզադրելով նորան քաղաքական դաւադրութեան մէջ։ Այդ բանի համար կառավարութիւնը պահանջեց, համաձայն Սահմանադրութեան, որ սենատը իրանից կազմէ բարձրագոյն Աաւեան, որ և եղաւ։ Գործը ամենքին յիշեցրեց հռովմէական պատմութիւնից Կատալինայի գաւադրութիւնը ընդդէմ հանրապետութեան։ Այն ժամանակ Ցիցերոնն էր հանրապետութեան փաստաբանը, այս անգամ՝ Ժան դը Բօրըպէր։ Դատի ձայնը

միայն լուերուն պէս, Բուլանժէն փախաւ, որպէս փախան նաև Բոշվօր և Գիլօն: Դատը եղաւ առանց մեղադրւածների, որնք մերժեցին երեալ դատարանի առջեւ: Գործը վերջացաւ Բուլանժէի կատարեալ խայտառակութիւնով թէ որպէս մարդ, թէ որպէս զինուոր, թէ որպէս նախակին մինիստր, թէ որպէս նախակին հրամանատար զօրքի և թէ որպէս քաղաքական դործիչ: Ամենը հիմնւած փաստերի և միմիայն փաստերի վերաց:

Դատի արձագանքը աշագին եղաւ և շատերի վերաց ազդեց սթափեցուցիչ կերպով: Որքան էլ աշխատեցին հանրապետութեան հակառակորդները նսեմացնել դատի նշանակութիւնը, բայց զաղանիքների լոյս աշխարհ հանելը իւր ներդործութիւնը արաւ և գոնէ միամիտների աչքը բացեց:

Այդ երեաց այս օդոսոսին կատարւած դաւառական ինքնաշխարութեան ընտրութիւնների ժամանակի, Բուլանժէն հրատարակեց, թէ 400 տեղերում, այսինքն բոլոր տեղերի երրորդ մասում, իւր կուսակցութեան մարդիկ կ'ընտրւեն, իսկ դոցանից 80-ի մէջ ինքը կ'ընտրւի: Բայց զորա փոխարէն Բուլանժէն ընտրւեց միմիայն 12 տեղերում: Աշագի՞ն պարտութիւն:

Դատի վատ վախճանի առաջին մէծ հետեանքն էր այդ: Բայց գեռ նշանաւորը պահւած էր ներկայ սեպտեմբերի (նոր տոմարով) 22-ին, երբ կատարի եցին պատղամաւորների ժողովի համար ընտրութիւնները: Մոնարխիական բոլոր կուսակցութիւնները համաձայնութիւն էին կայացրել Բուլանժէի հետ իրար թէ թեի տալ և իրար օգնել՝ հանրապետութիւնը կործանելու համար:

Կուսակցութեան պրեստիթը պահելու և ամբոխի երեակացութեան վերաց ազդելու համար, Բուլանժէն, որ իբր փախստական կենում է Լոնդոնում, իրան շրջապատել էր իշխանական սարք ու կարգով: Ողեւորւած իրանց համար առւած հանրապետութեան մօտալուս կործանման տեսարանով, մեծամեծ հարուստներ Բուլանժէին ձեռք էին կարկառել և օգնել նորան անհաշիւ գումարներով, որի ոյժով Բուլանժէին յաջողել էր պահել ֆրանսիացում, բայց մանաւանդ Պարիզում, վարձկան ամբոխներ, որոնց պաշտօնն էր միշտ բղաւել և ողեւորւել Բուլանժէի անունով և սարսափ զցել հակառակորդների վերաց:

Այս յօդւածի ծրագրի մէջ, սական, չի մտնում հանրապետական կուսակցութիւնների իրար հետ ունեցած լարաբերութիւնների խնդիրը։ Մեզ այս անդամ զրաղեցնողը սա է, թէ ինչո՞վ յաղթեց հանրապետութիւնը, իւր ի՞նչ զործքերով նա վաստակել է ֆրանսիական աղջի մեծամասնութեան և միևնոն ժամանակ բոլոր լուսաւոր ազգերի համակրութիւնը։ — Դորա համար մեզ հարկ կը լինի զիմել հանրապետութեան 19 տարւայ զործունեութեան՝ բոլոր առարկեզներում։ Այդ շատ ծանր զործ է, բայց մենք խոստացել ենք կատարելու և այս յօդւածով էլ կը տանք։

Մի երկրի հարատութիւնը, որպէս յայտնի է, բաղկացած է հողի դանձերից և այն խելքից ու եռանդից, որով նորա բնակիչները գիտեն բնութեան այն պարզեներից օգտուել։ Արդ, ֆրանսիան այս մեծ բաղդն ունի—և այդ է դիմաւոր պատճառը նորա առաջնակարգ հարատութեան, որ նա ունի մի մեծ գիւղացիական ազգաբնակութիւն հողը մշակելու համար։ Ներկայ թւականին նա ունէր ձիշդ 18.219.000 գիւղացի բնակիչ։ Այդ երկրում հողը մի քանի հարիւր ընտանիքների սեպհականութիւն չէ, որպէս Անգլիայում, Իրլանդիայում, ուր նոքա կապալառու մշակողներին հարատահարում են։ Ֆրանսիայում հողերի կտորների թիւը շուրջ 6 միլիոն է։ Այդ 6 միլիոն կալւածներից 5 միլիոնը մանր կալւածներ են, ամեն մէկը 10 հեկտարից (այսինքն մօտ 25 գետետինից) պակաս։ Այդ թւերից արգէն երեսում է, որ գիւղացիները մանր կալւածատէրեր են և իրանց կալւածները մշակողներ։ Ի՞նչ է, արել հանրապետութիւնը գիւղացիական այդ ամենաբազմաթիւ բասակարգի համար։

1885 և 1887 թւականների օրէնքներով ֆրանսիական կառավարութիւնը դժւարացրեց օտար երկիրներից եկած գարու և հաճարի ներմուծումը ֆրանսիա, բարձրացնելով մաքսը, որ 60 սանտիմ էր, մինչ 3 ֆրանկի, իսկ ալիւրի և օտար ցորենների համար, որ Ամերիկայից, Օգեստայից, Ունդարիայից և անդամ Հնդկաստանից ահազին քանակութեամբ ներմուծում էին, 5 ֆրանկի հասցնելով մաքսը։

Նոյն ձևով, մաքսը բարձրացնելով, պահպանեց ֆրանսիական

անասնապահութիւնը (եղան համար՝ 38 ֆրանկ մաքս, կովի համար՝ 20 ֆր., հորթի համար՝ 8 ֆր. և այլն):

Երկրագործութիւնը առաջացնելու դիմաւոր միջոցներից մէկն է ճանապարհներ շինելը: Արդ, 1869 թւականին, նապօլէտն Ա-ի կայսերութեան վերջնութեր տարում, երկաթուղիներ կացին 16.000 կիլոմետրի (մօտնոյնքան վերսո), մինչդեռ այժմ նոքա կազմում են 32.000 կիլոմետր, — երկու անգամ աւելի: Ո՞վ շինեց: — Հանրապետութիւնը:

Նաւագնաց գետերի տարածութիւնը 1870 թւին 7.300 կիլոմետր էր, այժմ՝ 11.855. ջրանցքների տարածութիւնը էր 3.369, այժմ՝ 4789 կիլո: Գիւղական կառքի ճանապարհները լրացնելու համար կայսերութիւնը որոշած էր մասել 841 միլիոն ֆրանկ. հանրապետութիւնը այդ գումարը բարձրացրեց մինչ 1.444 միլիոնի, որ գումարի մեծագոյն մասը հանրապետութիւնը ծածկեց: Այդպիսով նրանսիան ունի այժմ գաւառական-համայնքային ճանապարհներ 560.000 կիլոմետրի:

Բազարները, շաբաթական կամ այլ տօնավաճառների վերաց կարգադրութիւն անողները, նոցա նշանակութիւնը որոշողները կայսերութեան ժամանակ նահանգապետներն էին, իսկ այժմ հանրագույն ընտրութիւններից բղիսած ֆրանսիական զեմստաները, նահանգական խորհուրդները:

Ո՞վ չի լիշում այն զարհուրելի ասպատակութիւնները, որոնց գոհ գնաց ֆրանսիական վազապահութիւնը ֆիլոկանացի պատճառով. այդ ֆիլոկանացի պատճառովն էր, որ, փոխանակ 56 միլիոն հեկտոոլիտր գինու 1877 թւականին, 1886 թւականում հնձւեց միլիայն 25 միլիոն հեկտոոլիտր. այսինքն 1,128 միլիոն ֆրանկի տեղ ստացւեց միլիայն 501 միլիոն տեղական գինի:

Ֆիլոկանացի առաջացած չքաւորութեան դէմն առնելու համար և վազապահութիւնը կրկնի խրախուսելու մոքով, մի խելացի օրէնքի զօրութեամբ, ֆիլոկանացի աւերւած տեղերում նոր տնկած հողերը չորս տարով ազատւեցին հողահարկից և, Գերմանիացի ու Զւիցերիացի օրինակներով, կազմեցին սեպհական խորհուրդներ (սինդիկաններ), որոնք 1876 թւականից սկսած ամեն տարի մի-մի միլիոն ֆրանկ աէրութիւնից օգնութիւն են ստանում տեղական վազապահութիւնը խրախուսելու համար:

Նաքարի վերայ մաքսը պակսացրւեց 80 ֆրանկի տեղ՝ 50 ֆլ-րանկ. շաքարի գինը իջաւ ժողովրդի օգտին: Նորհիւ զորան՝ 100 կիլոգրամ ճախնդեղից, փոխանակ առաջւայ 6 կամ 7 կիլոգրամի, այժմ սկսեցին ստանալ 9.<sup>75</sup> կիլոգրամ մաքրած, այսինքն բավթի-նալի շաքար:

Տաց երրորդ հանրապետութիւնը շատ դործ կատարեց երկրա-գործական զարոցների համար: 16 յունիսի 1879 թւականի օրէնքով հիմնեց նահանգական և համայնքային երկրագործական ուսուցումն. այդ տեղերից պրօֆեսորները շրջում են՝ ժողովրդական ուսումնարան-ների ուսուցիչներին և գիւղացիներին դասախոսութիւններ կարդա-լու համար զիւղատնեսութեան մասին:

Գիւղատնեսական ուսուցիչների և պրօֆեսորների ոռնիկը կաց-սերութեան վերջին տարիներում, 1869 թ.-ին, 33,000 ֆրանկ էր: Իսկ այժմ՝ Այժմ 12 անդամ աւելի՝ 736,000 ֆրանկ:

1876 թւականին հաստատւեց երկրագործական ինստիտուտը, իսկ յետոց բացւեցին երկրագործական բարձր դպրոցներ Գրիցնոնում, Գրան-ժուանում, Մոնպելիում, 25 դործնական ուրիշ դպրոցներ, այգեգոր-ծական դպրոցը Վերսայում և 46 ազգոնօմիական կայարաններ — բոլորն էլ տէրութեան հաշով:

Այս կազմակերպութիւնով ֆրանսիական կառավարութիւնը հե-տեւ առաջին երկու հանրապետութիւններին, որոնցից առաջինը գիւղացիներին յետ դարձրեց հողը, իսկ երկրորդը, 1848 թւակա-նինը, գիտնական երկրագործական ուսուցման ինիցիատիւը տևեց: Նապօլէոն III-ը, ընդհակառակը, կազմակերպեց մի տեսակ արիստօկ-րատական երկրագործութիւն, իւր ձեռքը զցեց բազմաթիւ մեծ հողեր, որ նա իւր արբանեակներին պարզեց: Ներկայ հանրապե-տութիւնը նապօլէոնի սիսալը դրատեց և մանաւանդ մեծ ծառայու-թիւն արաւ ֆրանսիական երկրագործութեան՝ 20 օգոստ: 1881 թւականի դաշտահին օրինագրքով (Code Rural):

Ներկայ հանրապետութիւնն է, որ ֆրանսիայում մացրել է հա-մայնական ինքն ավարութիւնը, ինչպէս որ այժմ կայ մեր մի քանի քաղաքներում քաղաքացին ինքնավարութիւն: Համայնքի գլուխը և նորա օգնականները լնորւում են չորս տարով համայն-քի խորհուրդից (մեր դուման). նիստերը հրապարակական են, նիս-

տերի արձանագրութիւնները տպւում են. քաղաքազլուխը կամ համայնքի գլուխրկարող է ընդունելութեան ծախքերը պահանջել. նա իւր մօտն ունի մի բանալիք զանգակատան և եկեղեցու. նա է նշանակում գիւղական ուստիկանութիւնը: Համայնքի խորհուրդը կարող է արձակւել միմիայն մինհստրների խորհուրդով, հանրապետութեան նախագահի ստորագրութեամբ՝ «Պաշտօնական թերթում» հրատարակւած որոշման համաձայն. նոր ընտրութիւնները հետեւեալ երկու ամիսներում պէտք է կատարւեն: Պետութիւնը շատ հազիւ է միջամտում համայնքի իրաւունքների մէջ, որը իւր ինքնավարութիւնը և իւր յառուկ բիւջետը ունի: նահանգական խորհուրդները, վերջապէս, կարող են իրանց վիճակների սահմանների մէջ երկաթուղիների և ձիաքարշների համար կոնցեսիաներ տալ և իրանք են ըստուգում իրանց անդամների ընտրութիւնը:

«Համայնքների պաշտօնական թերթը» բոլոր գիւղական համայնքների վարչութիւններում ստացւում է, պարունակում է, բացի օրէնքներից և գեկրեաններից, նաև պարլամենտի նիստերի արձանագրութիւնները. գորանով ամեն մի գիւղացի ձրիապէս կարող է ծանօթանալ իւր վիճակի պատզամաւորի գործունելութեան հետ:

Ահա ա'յս է ֆրանսիական ինքնավարութիւնը, որի տեղ ի՞նչ ուներ կայսերութիւնը: — Դորա տեղ կայսերութիւնը ուներ 7-ին յուլիսի 1852 թւականի օրէնքը, որը համայնքի վերաց ամրող իշխանութիւնը կայսերական նահանգապետների ձեռքն էր տւել...

Գիւղացուն վերաբերեալ յօդւածը մենք չը վերջացրինք: 1869 թւականին երկրագործական մինհստրութեան բիւջետը միայն 4 միլիոն ֆրանկ էր, իսկ այժմ այդ բիւջետը հասնում է 36 միլիոնի:

Վերջապէս լիշենք մի դեռ ևս չը վճռւած օրինագիծը, որի գորութեամբ ամեն մի հողազուրկ գիւղացի՝ 55-երորդ տարիքից սկըսած՝ պէտք է տարեկան 300 ֆրանկ պենսիա ստանալ:

Դրոշներից մէկը համեմատում է այժմեան հանրապետականներին այն հին երրայնեցիների հետ, որոնք, սահմարացիներից սպառնացած, իրանց տաճարը կարողանում էին վերանորոգել միմիայն ծեփի: մի ձեռքում բոնելով և սուրբ միւս ձեռքում: Որ գեներալ Բուլանժէն կանգնեց հանրապետութեան թշնամիների ղլուխ—ացդ երբէք ֆրանսիան նորան չը պիտի ներէ: Կորիոլանն էլ անցաւ վոլո-

ւում են արտեցլ: Նախկին կառավարութիւնները, որոնք բանտորների խմբումներից վախենում էին, չ'սրախուսող օրէնքներ էին տւած: Անցեալ 6-ն յունիսի 1888 թւականի դեկրետով, բանտորական ընկերութիւնների կանոնապրութիւնները փոխւեցին բանտորների շահերին նպաստող մաքոլ: Այս բոպէին ֆրանսիացում կան 80 այդ տեսակ բանտորական, այսպէս կոչւած, կօպերատիւ ընկերութիւններ, որոնց կէսը այս վերջին 15 տարումն են հիմնած: Վերը յիշւած դեկրետը առանձին հեշտութիւններ է տալիս բանտորական ընկերութիւններին, որ տքա իրանց, ի հարկէ, աւելի սուղ միջոցներով քան կապիտալիստները, կարողանան տէրունական շահաւէտ յանձնարարութիւնները կատարել: Խ միջի այլոց աշխարհահանդիսի շինութիւնները կառուցանելու և այլ գործքերի մէջ մասնակցում են բանտորական կօպերատիւ ընկերութիւններ:

Կործատէրերից և բանտորներից բաղկացած ժողովներ կան ֆրանսիացում, որոնք մեծ զեր են խաղում անտեսական խնդիրներ վճռելու համար: Այդ ժողովները կոչւում են քանիմացների խորհուրդներ» (Conseils de Prud'hommes): Նոցա ստեղծողն էր առաջին կայսերութիւնը, իւր մի օրէնքով 1806 թւականի: Այդ օրէնքով, խորհուրդների մէջ պէտք է մասնակցէին աւելի գործատէրեր, քան բանտորներ: Երկրորդ հանրապետութեան օրէնքով, 1848 թւականի, այդ խորհուրդները պէտք է կազմէին հաւասար թւով գործատէր և բանտոր անդամներից: Երկրորդ կայսերութիւնը, նապօլէօն III-ի իշխանութեան ժամանակ, բառ առ բառ արտադրեց առաջին կայսերութեան օրէնքը, որպէս զի գործատէրերի շատութեան պատճառով, խորհուրդների նախագահութեան և քարտուղարութեան պաշտօնները միշտ գործատէրերի ձեռքում մնան: Այժմեան երրորդ հանրապետութիւնը, ընդհակառակը, կրկն մտցրեց 1848-ի օրէնքը, որի գորութեամբ գործատէր և բանտոր անդամները հաւասար թւով պիտի լինին. այդ օրէնքը որոշեց, որ եթէ նախագահը գործատէրերից ընտրւէր, քարտուղարը պէտք է բանտորներից լինէր և ընդհակառակը: Բանտորական գրքերը պարտաւորիչ չեն, աղաս են հարկերից և ծառացում են իբր անձնական վկացաթըթեր և պէտք է պաշտպանեն ֆրանսիական բանտորներին օտարների մրցումից: Անցեալ տարւայ Ֆլոքէի, այսպէս կոչւած, օտար-

կացոց բանակը, դրգուած իւր դէմ արւած յանդիմանութիւնից. բաց նա զնէ զիջանեց հսովմայեցի կանանց խնդիրքին և յետ կանգնեց իւր ոճիրային պլանից իւր հայրենիքի դէմ: Բուլանժէն էլ ուղում է իւր քէնը հանել իւր թշնամիներից: Ֆլօքէից մի ազ-նիւ մենամարտութեան մէջ տասցած վէրքը, զօրքի ցուցակներից դուրս զցւելի իւր նախկին զինակիցների ձեռքով, պետական աւագ դատախազից արձակած ձերբակալման հրամանը, պետական դատա-րանի վճիռը, — այդ բոլորը նորան հանդիսաւ չեն թողնում: Եւ նա չի բաշւում իւր հայրենիքի թշնամիների փողերով իւր քսակները լքցնել, որ մի օրինական կառավարութիւն ամեն միջոցներով յաղ-թահարէ: «Յաւալի է, ասում է այդ գրողը, որ մի ընդունակ և դործունեաց գեներալ կարող էր ազդքան ընկնել և որ առաջին հանրապետութեան փառաւոր գեներալների օրինակները՝ Կարնօզի, Մարտօզի, Հոշի՝ անհետք անցան ֆրանսիական զօրքի նախկին պե-տի մօտից»:

Ֆրանսիայում երկրորդ նշանաւոր դասակարգը կազմում են բան-աորները: Ֆրանսիական ձախնածուների երեք քառորդը գիւղական դասակարգին են պատկանում: Այդ երեւում է արգէն նորանից, որ այդ երկրում կան 36.000 համայնք, որոնցից 27.000-ը այնքան փոքր են, որ նոցանից իւրաքանչիւրում բնակիչների թիւը 1.000-ի չի հասնում: Մնացած 9.000 տեղերում և քաղաքնե-րում բանաորները կազմում են մեծ տոկոս:

Խնդիրը սա է, թէ ներկայ հանրապետութիւնը ի՞նչ է շինել բանաւոր դասակարգի վիճակը բարւոքելու համար:

Ֆրանսիայում, մինչ վերջին ժամանակներս, զօրութեան մէջ էր քաղաքացիական օրինագրքի մի յօդւածը, որը ծագում էր 1781 թւականից, որի զօրութեամբ դատարանի առջև, բանաորի հակա-ռակ վկայութեան դէպքում, վարձի խնդիրներում գործատիրոջը ան-պայման հաւատք պիտի ընծացւէր: Բանաորների համար այդ վի-րաւորիչ և վնասակար յօդւածը չնշւեց հանրապետութեան օ-րէնքով 8-ին յուլիսի 1880 թ.:

Բոլոր նոքա, որոնք հետեւում են սօցիալական օրէնսդրութեան

Եւրոպական երկիրներում, պիտի դիտենան նաև թէ ի՞նչ մեծ սօցի-  
ալական խնդիր է բանւոր դասակարգի պաշտպանների պահանջը, որ  
գործարաններում աշխատանքի տեղութիւնը որոշ չափից : Այդ պիտի  
անցնէ: Այդ բանի համար մի օրէնք տեսեց երկրորդ կարճատև հան-  
րապետութիւնը 1848 թւականի. բայց օրէնքի զօրութիւն ստացաւ.  
Նա միմիայն այժմեան երրորդ հանրապետութեան ժամանակ, որը  
մոտցրեց Ֆրանսիայում գործարանների վերաց հսկող տեղական մաս-  
նաժողովների և բանւորական տեսուչների հաստատութիւնները: Այդ  
օգտաէտ և անհրաժեշտ հաստատութեան, այն է բանւորների տե-  
սուչների համար, ներկայ 1889 թւականի բիւջետում նշանակւած  
է 176.000 ֆրանկ: Այդ տեսուչների պարտականութիւնն է հոգալ,  
որ կանացք և երեխանները գործարաններում ծանր աշխատանքներ  
միայն սահմանափակ չափով կատարեն:

Ներկայ երրորդ հանրապետութիւնը մի դարուց դէսը առաջին  
քայլը համարձակեց անել՝ բանւորներին էմանցիպացիա տալու հա-  
մար: 1884 թւականի օրէնքով, ներկայ մինիստր-նախագահ Տիրա-  
րի օրինագծի համաձայն, բանւոր դասակարգը չափահասու-  
թեան իրաւունքները ստացաւ: Այդ օրէնքի համաձայն, բանւորնե-  
րը կարող են դասակարգային ընկերութիւններ, այն է՝ սինդիկատ-  
ներ կազմել՝ բոլորովին ազատ, առանց կառավարութիւնից նախա-  
պէս թոյլտութիւն ստանալու. նոքա պարտաւոր են միայն ի-  
րանց կանոնադրութիւնը քաղաքային վարչութեանը հաղորդել—ու-  
րիշ ոչինչ: Այդ բանւորական սինդիկատները ունին իրաւական անձ-  
նաւորութեան իրաւունքները, կարող են իրանց անդամների համար  
փոխառութիւնայողական գանձարաններ և գրադարաններ հիմնել, մաս-  
նագիտական կուրսեր հիմնել և այլն: Նահանգապետներին ուղղած  
ներքին գործերի մինիստրի մի շրջաբերականում այդ սինդիկատների  
մասին, ի միջի այլոց, առած է. «Նոքա վայելում են կառավարու-  
թեան բոլոր համակրութիւնը և նոցա հիմնողները ամեն անհրա-  
ժեշտ տեղեկութիւնները կը ստանան»:

Ահա այդ սինդիկատներն են, որոնց թիւը 1877 թիւն 700  
էր, իսկ այսօր 2.200:

Եւրոպական կան բանւորների ընկերութիւններ շահագիտական  
նպատակով հիմնած: Նոյն տեսակ ընկերութիւններ Ուու սիացում կոչ-

Բայց ոչինչ չ'օգնեց. սեպտ. 22-ին համազգային դատավճիռը կարդացւեց հանրապետութեան վերաց էլ, բուլանմէի վերաց էլ, բոլոր մնարխանների վերաց էլ: Հանրապետութիւնը դուրս եկաւ ընտրութիւններից զերծ ու ողջ, այնպէս՝ ինչպէս կար, միայն մի փոքր էլ աւելի առողջացած:

Ճշմարիտ է, հանրապետութիւնը ոչ մի նոր տեղ ձեռք չը բերեց, բայց այսքան կատաղի և հզօր ընդդիմադրութեան առջև մնալ գրեթէ բոլորովին չը վնասւած՝ դորա համար հարկաւոր էր ունենալ մեծ բարոյական ոյժ, պէտք էր ունենալ խորը արմատներ ժողովրդի մէջ:

Ընտրութիւնները 22-ին սեպտեմբերի (նոր տումարով) և լրացուցիչ ընտրութիւնները 6-ին հոկտեմբերի տևեցին հանրապետութեան պաշտպան մօտ 365 պատգամաւոր, իսկ հակառակորդներին, հանրապետութեան թշնամի կուսակցութիւններին՝ շուրջ 210 պատգամաւոր, ասել է թէ թշնամիները, չը նայած իրանց բոլոր գործադրած ջանքերին, առաջւանից մի քայլ առաջ չը զնացին:

Յաւալի է, որ հանրապետութիւնը նմանապէս նոր հող չը գրաւեց և մինչև անդամ մի երկու տեղ էլ կորցրեց. ցաւալի է, որ հանրապետութիւնը կորցրեց իւր մի քանի ականաւոր և հռչակւած պաշտպաններին, որպէս ծիւլ ներրին և որ շատ ուրիշները միմիայն երկրորդ անգամ այլ ընտրութիւններին կարողացան վերընտրել: Բայց այն ահագին և լաւ դիսցիպլինած կօալիցիալի դիմաց ունեցած տեղերը պահպանելն էլ—մեծ քաջազործութիւն էլ:

Հանրապետութիւնը դրականապէս վաստակեց միայն մի բան:—Այժմեան հանրապետական պատգամաւորների մէջ արմատականները աւելի քիչ են թւով, քան մինչ այսօր նոքա էին: Դոցա պարագլուխները՝ կլեմանսօ, Ֆլոքէ քաղաքական հեռատեսութիւնից զուրկ մարդկի են. իրանց նեղ ծրագիրը առաջ մղելու նպատակով, նոքա միշտ միացել են հանրապետութեան թշնամիների հետ՝ մինխատրութիւնները վայր դլորելու համար, որի շնորհիւ հանրապետութիւնը վաստակեց անհաստատ կառավարութեան անունը: Ազգի հանրապետական մեծամասնութիւնը այս անդամ ուգեց դոցա պատժել և պատճեց աւելի քիչ թւով արմատականներ ուղարկելով պատգամաւորների ժողովը և զօրեղացնելով՝ չափաւորականների կուսակցութիւնը:

ների օրէնքը, որ այնքան աղմուկ հանեց Արտասահմանում, իսկապէս նոյն նպատակն ունի՝ օտար բանւորների ներկազութիւնը ֆրանսիայում պաշտօնապէս վկացել և դորա միջոցով պաշտպանել ֆրանսիական բանւորին արդէն չափից զուրս շատ օտար բանւորներից, որոնք իրանց ապրուսող Ֆրանսիայումն են գտնում:

Սօցիալական օրէնսդրութեան նկատմամբ գերմանականը, որպէս «Մուրճ»-ի լնթերցողներին պէաք է յացնի լինի, հռչակւած է: Գլխաւորապէս հիմնարկի, այսպէս կոչւած, պետական սօցիալիզմի շրջնորհիւ, Գերմանիան ստացաւ օրէնքներ, որոնց զօրութեամբ ծերացած բանւորները և գործարաններում թշւառացած բանւորները ապահովում են մասսամբ տէրութեան, մասսամբ զործարանատէրերի հաշւով: Այդ օրէնքները հռչակ ստացան բոլոր լուսաւորւած երկիրներում և մեծ շարժում առաջացրին յօդուոր բանւոր դասակարգի:

Արդ, գերմանականի հետ արժանաւոր կերպով կարող են կանգնել ֆրանսիական օրէնքները նոյն առարկաների մասին:

Ներ բանւորներին ապահովող գերմանական Altersversorgungsgesetz օրէնքի նման հանրապետութիւնը աւեց 20 յուլ. 1886 թւ-ւի նշանաւոր օրէնքը, որով հաստատեց, այսպէս կոչւած՝ Caisse nationale des retraites pour la vieillesse, այսինքն՝ ծերութեան համար հրաժարւածների ազգային գանձարան: Այդ օրէնքը որոշում է, որ ամեն մարդ կարող է ամենաքիչը մի ֆրանկ ուահ տալ բոլոր տէրունական ֆինանսական և պօստային բիւրօններում, որ ծննդեան վկայական ներկայացնելը չի կապւած ոչ մի ծախքերի հետ և որ ամեն բանւոր կարող է ինքը որոշել, թէ 50 տարեկան դառած օրից յետոյ ո՛ր ժամանակից սկսած նա ուղում է իւր սոկոնները ստանալ: Եթէ բանւորի հետ որ և է դժբաղդութիւն հանդիպէ, նա կարող է ժամանակից առաջ ստանալ իւր պենսիան: 9 տպր. 1881 թւի մի օրէնքով երեխաները կարող են՝ առ անց թոյլութեան ինսամակալների և կանայք՝ առանց գիտութեան իրանց ամուսինների, իրանց փողերը պօստային ինսյողական գանձարաններում պահ տալ: Խնայւած զումարները տալիս են Յ տոկոս:

Դժբաղդութիւնների համար ապահովող օրէնքը, որի երկու ինիցիատօրներից մէկը նախկին մինիստր, այժմ՝ հանրապետութեան

Նախագահ Սաղի Կարնօն է, հոգում է վիրաւորւած բանտորների համար խելացի և սիրալիր կերպով:

Բանտորների համար կան մասնագիտական ուսումնարաններ, որոնք 17 մայիսի 1888 թւականի դեկրետով գտնվում են երկու մինիստրութիւնների իշխանութեան ներքոյ՝ վաճառականութեան մինիստրութեան և լրսաւորութեան մինիստրութեան: Նահանգական բանտորական-մասնագիտական ուսումնարանների ուսուցիչներին նշանակում են նահանգապետները, համայնքներինը՝ համայնքապետները կամ ազգապէս՝ քաղաքաղլուխները: Այդ բանտորական մասնագիտական ուսումնարանների համար ուսուցիչներ է պատրաստում Սէն-Կլու քաղաքում 1884-ին հիմնած Ecole normale supérieure բարձրագոյն դպրոցը: Երեք մասնագիտական և շատ լաւ զեկավարւող ուսումնարաններ հիմնած են Վիերզօն, Վուարօն և Արմանտիէր քաղաքներում: 1881 թւականին հաստատեց նեւերում Շնպրոց կաթսայագործութեան և երկաթէ մեծ շինութիւններին: 1883 թւականին հաստատեցին Օբիւսօն, Լիմօն, Նիցցա և Ալժիրայի Դելիս քաղաքներում զարդարեւեստների մի մի դպրոց (Ecole d'arts décoratifs). Նոյնաժամանակ ստացաւ Բուրժ քաղաքը մի գեղարեւեստների ուսումնարան (Ecole des beaux-arts), Ուուրէ քաղաքը՝ ինդուստրիալի արեւեստների ուսումնարանը (Ecole des arts industriels), Հիլ քաղաքը արհեստաւորաց Ecole d'arts et métiers դպրոցը: Ժամագործական դպրոցը Կիւտէում, հանքային դպրոցը Ալէում, ինդուստրիալի դրայրոցները Անժեր, Շալօն Մարնի վերայ և Էքս քաղաքներում, որոնցից իրաքանչիւրում մօտ 300 աշակերտներ են ուսանում և որոնք վերջին տարիներում բոլորովին նոր կազմակերպւեցին:

Բայց դեռ շարունակենք: 8 օգոստ 1885 թւի օրէնքով ամեն մի աղքատ հայր, որ 7 որդի ունի, իրաւունք ունի նոցանից մէկի համար ձրի տեղ պահանջել մի առևտրական կամ երկրագործական դպրոցում: Մի օրէնքով՝ 26 փետր. 1887 թւականին բիւժեուի մէջ մտաւ 640,000 ֆրանկի գումարը այդպիսի ձրի աշակերտների ծախքերը հոգալու և բազմազաւակ աղքատ գերդաստաններին պաշտանելու համար:

Ահա այսքանը, ինչ վերաբերում է բանտոր դասակարգի վիճակի բարւոքման խնդրին:

Հետևեալ անգամ մենք կը շարունակենք այս ուսումնասիրութիւնը, ցոյց տալու համար, թէ ի՞նչ է շինել ներկայ երրորդ հանրապետութիւնը վաճառականութեան համար, դպրոցական գործի համար, զօրքի համար և այլն:

Z.